Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլ
Պատասխաններ՝ 10-րդ դասարան

1. երկնամուխ, սիգապանծ, մանրազնին, ուղղակի, ապշեցնող, ճշգրտություն, ագուցված, շեղբ, գիշերուզօր, տքնելով, ամփոփեր, խոնարհվել, խորին, հոգեհանգստի, հղկված, ձեղունի, փտելուց, զերծ, զօծում, զմուռսով, ախորժաբույր, քսուքներով, զուգում, պճնանքով, ակնակապիճներում, մումիա, հոգում, հանդերձյալ, ապահովված, գոտևորում
2. Մեծ ժառանգություն է ստացել մարդկությունը Հին աշխարհից՝ Եգիպտոսում վեր խոյացող երկնամու- բուրգերը՝ հնադարում ապրած փարավոնների **դամբարանները**:

Իր վիթխարի չափերով ամենամեծը Քեոփս փարավոնի սիգապան- դամբարանն է. նրա կառուցման համար, ըստ հնէաբանների մանրազ-ին հաշվարկների, պահանջվել է երկու միլիոն երեք հարյուր հազար կրաքարային զանգված՝ յուրաքանչյուրը երկու տոննայից ավելի: Ու-ակի **ա-շեցնող** է քարտաշների անիրական թվացող աշխատանքի ճ-գրտությունը: Հսկա վեմերն այնպես են ա-ուցված, որ դանակի շեղ-ն անգամ չի մտնի դրանց արանքը:

Հազարավոր ստրուկներ, տասնամյակներ գիշերուզ-ր տ-նելով, շինեցին ան-ստգյուտ մի կոթող, **որն** իր ընդերքում պիտի ա-փոփեր փարավոնի **աճյունը:**

Նրանք, ովքեր ցանկանում էին խոնար-վել՝ իրենց խոր-ին հարգանքի տուրքը մատուցելով մեռած թագավորին, այցելում էին հո-եհանգստի՝ հ-կված սյուներով տաճարը, **որի** լույսը թափանցում էր ձե-ունի **անցքերից**: Փարավոնի մարմինը փ-ելուց զեր- պահելու նպատակով զ-ծում էին զմու-սով, որից հետո՝ հոտավետ ձյութով, ախո-ժաբույր կնդրուկով ու քսու-ներով: Այնուհետև զգեստավորում, զու-ում էին թագավորին վայել հագուստով ու պ-նանքով, իսկ ակնակապի-ներում զետեղում փղոսկրյա կամ բյուրեղապակյա աչքեր: Այս կերպ էր պատրաստվում մում-ան:

Հո-ում էին նաև, որ հանդեր-յալ կյանքում հանգուցյալը ապահո-ած լինի ամեն ինչով. նրանք դամբարանը բոլորեքյան գոտ-որում էին կենցաղային զանազան իրերով, նույնիսկ՝ կառքով:

3. Իր, համար, հազար, ավելի, անգամ, հետո, վայել, կամ, զետեղում, զուգում և այլն:
4. հնուց ի վեր, գնալ բերել, վաղը նեթ, օր օրի, կաս-կարմիր, գյուղեգյուղ, երեք չորրորդ, վառ կանաչ, առձեռն, հայ-ֆրանսիական, թերի բարձրագույն, ոտքով-գլխով, հյուսիս-արևելք, նորջուղայեցի, հրամկազմ մեջ բերել, հինգհարկանի, լիտր-վայրկյան, անուն-ազգանուն,ոչ ոք,:
5. **դամբարանները**-բացահայտիչ, **ապշեցնող**- ստորոգելի, **որն**- ենթակա, **աճյունը**-ուղիղ խնդիր, **որի**-հատկացուցիչ, **անցքերից**-տեղի պարագա
6. **Գլուխը խոնարհել**- բարևել, ենթարկվել, **գլուխ գլխի տալ**-խորհրդակցել, **գլուխը տալ**-մեկի կամ որևէ բանի համար ամեն ինչի պատրաստ լինել, **գլխի տակ փափուկ բարձ դնել**-մեկին քաղցր խոստումներով միամտացնել՝ խաբել՝ հանգստացնել, **գլուխը տանել**- շատախոսելով ձանձրացնել, **գլխից դուրս խոսել**- անմիտ, անիմաստ բաներ ասել, **գլխով անցնել**-մի բանի մասին մտածել, որևէ բանի մասին կասկածել, մեկի կյանքում տեղի ունենալ՝ պատահել (որևէ դեպք, անցք) **գլխում այբ չլինել**- տգետ լինել, **գլխում նստել**-մեկի ասածը կամ որևէ միտք ընդունել, **գլխում միտք ծագել**-որևէ միտք հղանալ և այլն
7. **զմբեթի կոնաձև ծածկ**- վեղար, **ոտքի նեղ ճանապարհ**-արահետ,կածան, **հատիկեղենի կույտ**- շեղջ, **փայտագործ վարպետ**- ատաղձագործ, հյուսն, **արու թռչուն**- վարուժան:
8. Մեկնաբանի՛ր **արջի ծառայություն** - իրականում վնաս պատճառող ծառայություն

դանայան տակառ- տաժանելի, վերջ չունեցող ապարդյուն աշխատանք

աքիլլեսյան գարշապար- մարդու կամ մի բնագավառի թույլ՝ խոցելի տեղ

կրակից ուրիշի ձեռքով շագանակներ հանել- ուրիշին իր օգտին բանեցնել, վտանգավոր դրության պահին ուրիշին օգտագործել

Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլ
Գնահատման չափանիշներ - 10-րդ դասարան

Ամբողջ հարցաշարին տրվում է 50 միավոր, որից՝
1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,2, ընդհանուր՝ 6 միավոր:
2. Բնագրի ճիշտ կետադրության համար տրվում է 5 միավոր:
   Կետադրական կանոնին վերաբերող յուրաքանչյուր ոչ ճիշտ նշանի դեպքում հանվում է 0,5 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,25, ընդհանուր՝ 5 միավոր
   Եթե խոսքի մասը կամ բառիմաստը սխալ է նշված, միավոր չի տրվում:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,25, ընդհանուր՝ 5 միավոր
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 6 միավոր
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1 ընդհանուր՝ 4 միավոր
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր

9. Շարադրությանը տրվում է 10 միավոր: Ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 միավոր, կետադրականի համար՝ 0,5, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 միավոր, կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: